# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 12
*18 հունվար 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 162-171 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 162

**30 հոկտեմբերի 2017**

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Մելինե Գյոզալյան – 60000դր
2. Լարիսա Առաքելյան – 50000դր.
3. Ծովինար Վահրամյան – 80000դր.
4. Ռուդիկ Պողոսյան – 50000դր.
5. Համեստ Ալավերդյան – 70000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» 11 2017 թվականի N 163

### 06-031-0049-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ , ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով և հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի սեղ.5126, 30/10/2017 թվականի վկայագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գուգարք համայնքի 06-031-0049-0002 ծածկագրի տակ գտնվող 0.08035 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Միհրան Մարտունի Հարությունյանի / ծնված 23/02/1972թ/ սեփականության իրավունքը
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Ճանաչել 06-031-0003-0011 ծածկագրի տակ գտնվող 0,08035 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 2001 թվականը կառուցված 179.33 քմ բնակելի տան , 85.24 քմ ավտոտնակի նկատմամբ Միհրան Մարտունի Հարությունյանի / ծնված 23/02/1972թ/ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Գուգարք համայնք, 12 փողոց, 4 բնակելի տուն:
6. Ուժը կորցրած ճանաչել 30/10/2000 թվականին տրված քաղվածքը:

Համայնքի ղեկավար      Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

03 նոյեմբերի 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 164

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0012-0081 ԾԱԾԿԱԳՐԻ՝ ԱՐԱՄ ՍՊԱՐՏԱԿԻ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումով՝*
*որոշում եմ.*

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0012-0081 ծածկագրի՝ Արամ Սպարտակի Ջուլհակյանին (մահացած 13.10.2017թ.) պատկանող բնակելի տան համար (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական 1946135, տրվ. 14.12.2011թ. ) հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք Կոտեջային 3 փողոց, բնակարան 1/ 1:

Գուգարքի համայնքի ղեկավար՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Գուգարքի գյուղական համայնք

# Ո Ր Ո Շ Ու Մ

«06» 11 2017 թվականի N165

### 06-031-0011-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12/08/2010թ թիվ 1004-Ն որոշմամբ, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գուգարք համայնքի 06-031-0011-0006 ծածկագրի տակ գտնվող 0.03146 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վարուժան Արտուշի Վարդանյանի /ծնված 1958թ/ սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
4. Ճանաչել 06-031-0011-0006 ծածկագրի տակ գտնվող 0.03146 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992-1993թթ կառուցված 77.16 քմ բնակելի տան նկատմամբ Վարուժան Արտուշի Վարդանյանի /ծնված 1958թ/ սեփականության իրավունքը:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Գուգարք համայնք, [illegible] փողոց, 24 բնակելի տուն:

4-րդ

Համայնքի ղեկավար՝ Ա. Աշուղյան

07300669

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

07. 11. 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 166

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՔԱԵԼԻ ՋԱԼԱԼՅԱՆԻ, ՌՈԶԱ ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՋԱԼԱԼՅԱՆԻ, ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՋԱԼԱԼՅԱՆԻ ԵՎ ՄԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՋԱԼԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ, ՈՐՈՎ ՆՐԱՆՔ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆՎԱՄԲ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 0245-0066 ԾԱԾԿԱԳՐԻ 1676քմ ՎԱՐԵԼԱՀՈՂԻՑ ԵՎ

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 101 հոդվածի 1-ին կետով՝*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 0245-0066 ծածկագրի 1676քմ վարելահողը, որը համարվել է Հարություն Ջալալյանի, Ռոզա Առաքելյանի, Աննա Ջալալյանի, Հայկ Ջալալյանի և Միշա Ջալալյանի համատեղ սեփականությունը, ճանաչել որպես համայնքային սեփականություն:

Միջնորդել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի վարչության Վանաձորի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու համապատասխան փոփոխություն և Գուգարքի կադաստրային քարտեզի 0245-0066 ծածկագրի 1676քմ վարելահողը գրանցել որպես համայնքային սեփականություն:

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

07 11 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 167

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0035 ԾԱԾԿԱԳՐԻՑ 29.4քմ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝*

ՈՐՈՇԵՑԻ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0035 ծածկագրից (համաձայն հատակագծի) 29.4քմ մակերեսով ընդհանուր օգտագործման հողատարածքի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:

Միջնորդել անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու համապատասխան գրանցում:

2. Գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք 1 փողոց 14/43

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի 05.10.2017թ. N 147 որոշումը:

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  N 168

**10 նոյեմբերի 2017**

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Սիրանուշ Ղասաբյան – 20000դր.
2. Միշա Մադոյան – 50000դր.
3. Արեն Հարությունյան – 60000դր.
4. Ռիմա Պողոսյան – 100000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

10. 11. 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 169

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0224-0262 ԾԱԾԿԱԳՐԻ 0.05772հա ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏՅՈՊԱ ԻՎԱՆԻ ԱՇՈՒՂՅԱՆԻ, ԱԼՎԱՐԴ ՑՈԼԱԿԻ ԱՇՈՒՂՅԱՆԻ, ՎԱՉԵ ՍՏՅՈՊԱՅԻ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԵՎ ՎՐԵԺ ՍՏՅՈՊԱՅԻ ԱՇՈՒՂՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով Ստյոպա Աշուղյանի դիմումը, Գուգարքի գյուղխորհրդի հողերի սեփականաշնորհման հանձնաժողովի 21.11.1991թ. N 11 որոշումը, «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագիծը՝*

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Վերականգնել Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0224-0262 ծածկագրի 0.05772հա վարելահողի նկատմամբ Ստյոպա Իվանի Աշուղյանի, Ալվարդ Ցոլակի Աշուղյանի, Վաչե Ստյոպայի Աշուղյանի և Վրեժ Ստյոպայի Աշուղյանի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը, ճանաչել նրանց համատեղ սեփականության իրավունքը վերոհիշյալ վարելահողի նկատմամբ:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

16 11 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 170

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0011-0006 ԾԱԾԿԱԳՐԻ, ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՏՈՒՇԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ (ՀԱՄԱՁԱՅՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ N 09112017-06-0016 ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

ՈՐՈՇԵՑԻ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0011-0006 ծածկագրի, Վարուժան Արտուշի Վարդանյանին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք Էներգետիկների 4-րդ փողոց տուն 23

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

21. 11 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 171.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿՈՏԵՋԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 10/4 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԵԼԱՆՅԱ ՄԻՀՐԱՆԻ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԻՐ ԿՈՏԵՋԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ» ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 63 հոդվածի .1-ին կետով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. N 714 Ն որոշման «Է» կետով, 26.12.2002թ. ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի դրույթներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝*

## ՈՐՈՇԵՑԻ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0012-0069 ծածկագրի 109.62քմ (որից 32.34քմ-ը որպես սեփականություն, իսկ 77.28քմ-ը որպես ընդհանուր բաժնային սեփականություն Գուգարքի Կոտեջային 2-րդ փողոցի 10/2 հասցեի բնակիչների հետ) հողատարածքը անհատույց հատկացնել Մելանյա Միհրանի Շահինյանին (համաձայն հատակագծի):
2. Նշված հողատարածքում կառուցված շինությունները օրենքի ուժով ճանաչել օրինական:
3. Գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
   գ. Գուգարք Կոտեջային 2-րդ փողոց տուն 10/4
4. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի 20.06.2017թ. թիվ 96 որոշումը:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ